Հավելված N 4
ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի
2018 թվականի հունիսի 29-ի
N 481-Ա հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ և ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արդյունաբերական քաղաքականության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում, որն իր իրավասությունների սահմաններում ապահովում է Նախարարությանը օրենքով և այլ իրավական ակտերով վերապահված խնդիրների և գործառույթների իրականացումը:

2. Վարչությունն իր իրավասությունների շրջանակներում պատասխանատվություն է կրում իր վրա դրված խնդիրների ու գործառույթների ժամանակին և պատշաճ իրականացման համար:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում նախարարը՝ նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ՝ նախապես համաձայնեցնելով վարչության պետի և համակարգող պաշտոնատար անձի հետ:

4. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման հիմնական ուղղությունների մշակման բնագավառում Վարչության խնդիրներն են՝

1) արդյունաբերության գլոբալ մրցունակության բարձրացում,

2) գործարարության և արտահանման խթանում,

3) Հայաստանի Հանրապետության տարածքային տնտեսական զարգացման անհամաչափությունների նվազեցմանն նպաստելը,

4) արդյունաբերական կազմակերպությունների պետական աջակցության քաղաքականության մշակում:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Վարչությունն իր առջև դրված խնդիրների և նպատակների իրականացման համար իր իրավասությունների սահմաններում իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) մշակում է Հայաստանի Հանրապետության արդյունաբերության զարգացման քաղաքականությունը և իրականացնում այն տնտեսության գերակայություններին համապատասխան,

2) մշակում է ընկերություններին օրենսդրության շրջանակներում պետական աջակցության քաղաքականությունը,

3) իր իրավասության սահմաններում իրականացնում է տնտեսության ճյուղերի արտադրական գործունեության մոնիտորինգ, վեր է հանում կոնկրետ ձեռնարկություններում առկա խնդիրները և առաջարկություններ է ներկայացնում դրանց վերացման ուղղությամբ,

4) ոլորտային և ճյուղային քննարկումների միջոցով վեր է հանում արդյունաբերական զարգացման խոչընդոտները և առաջարկություններ է ներկայացնում դրանց վերացման ուղղությամբ

5) առաջարկություններ է ներկայացնում տեղական արդյունաբերական ընկերությունների միջև կոոպերացիոն կապերի զարգացման և կլաստերների ձևավորման նպատակով,

6) մասնակցում է արտահանման խթանման իրավական դաշտի մշակմանը, վեր է հանում արտահանման խոչընդոտները և առաջարկություններ է ներկայացնում դրանց վերացման ուղղությամբ,

7) մշակում է արտահանման խթանման ծրագրեր,

8) իրականացնում է ԵԱՏՄ շրջանակներում արդյունաբերական համագործակցության զարգացում և խորացում,

9) մասնակցում է տեխնիկական կանոնակարգմանն առնչվող իրավական դաշտի մշակման աշխատանքներին, այդ թվում՝ ԵԱՏՄ շրջանակներում,

10) մասնակցում է ԵԱՏՄ սակագնային և ոչ սակագնային կարգավորման աշխատանքներին,

11) մասնակցում է ներդրումների և ներդրողների պաշտպանության քաղաքականության մշակմանը և դիտանցմանը,

12) մասնակցում է միկրոտնտեսական քաղաքականության մշակմանը և դրա դիտանցման իրականացմանը,

13) մասնակցում է տնտեսության զարգացման պետական և մասնավոր երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ընթացքի դիտանցմանը և արդյունքների գնահատմանը,

14) մասնակցում է մաքսային, հարկային և ոչ հարկային եկամուտների քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը՝ երկարաժամկետ տնտեսական աճի մարտահրավերների տեսակետից,

15) մասնակցում է տնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության մշակմանը,

16) մասնակցում է գլոբալ մարտահրավերներին համապատասխան երկարաժամկետ ոլորտային զարգացման ծրագրերի մշակմանը,

17) մասնակցում է նորամուծության խթանման քաղաքականության մշակմանը,

18) մասնակցում է արտաքին շուկաների ուսումնասիրմանն ու վերլուծմանը և ներկայացնում առաջարկություններ տեղական արտադրողների համար արտաքին շուկաների հասանելիության, ինչպես նաև արտահանման խթանման վերաբերյալ,

19) առաջարկություններ է ներկայացնում պետական գործառնություններում մասնավոր հատվածի դերի բարձրացման վերաբերյալ,

20) մասնակցում է գործարար միջավայրի խոչընդոտների բացահայտմանը և առաջարկություններ է ներկայացնում դրանց վերացման ուղղությամբ, մասնակցում է կազմակերպությունների ստեղծման, կտրուկ աճին նպաստող գործարար միջավայրի ձևավորմանը,

21) մասնակցում է տարածքային տնտեսական քաղաքականության մշակմանը և իրականացմանը,

22) իր իրավասության սահմաններում մասնակցում է հողերի կառավարմանը և համայնքների քաղաքաշինական փաստաթղթերի մշակմանը, Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատանքի գնահատմանը.

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6. Վարչության կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատում է նախարարը՝ նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ՝ նախապես համաձայնեցնելով վարչության պետի և համակարգող պաշտոնատար անձի հետ:

6. Վարչությունը՝

1) իր իրավասությունների շրջանակներում կազմակերպում և իրականացնում է աշխատանքներ՝ համագործակցելով Նախարարության այլ ստորաբաժանումների, Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ.

2) Նախարարության այլ ստորաբաժանումների հետ համատեղ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների համագործակցությամբ, նախապատրաստում է Վարչության գործունեության ոլորտներին վերաբերող օրենքների և իրավական այլ ակտերի նախագծեր.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրին համապատասխան, ներկայացնում է հաստատման Վարչության ծրագրերը, ինչպես նաև ապահովում է դրանց կատարումը.

7. Վարչության աշխատանքների ղեկավարումը իրականացվում է Վարչության պետի կողմից:

8. Վարչության պետը՝

1) իրականացնում է Վարչության աշխատանքների կազմակերպումը և ընդհանուր ղեկավարումը.

2) պատասխանատու է Վարչությունում համապատասխան աշխատանքային մթնոլորտի և կարգապահության ապահովման, Վարչությունում

աշխատողների միջև աշխատանքների հավասարաչափ բաշխման և դրանց կատարման համար.

3) բացահայտում, վերլուծում և գնահատում է Վարչության առջև դրած գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում է այդ աշխատանքների կատարումը.

4) անմիջական հաշվետու է Նախարարին: